ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱՆ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Յոկտեմբերի 8-ին. Թիֆլիս. №41.

## ՊՐԵՄԻԷՐ ԿՈԿՈՎՑԵՒԸ ԵՒ «ԽԱԹԱԲԱԼԱՆ»

—Ձեր «Խաթաբալէն» ես շատ եմ հաւանում, պէտք է խորհուրդ տալ, որ հայերը հինգ-հինգ անգամ կարդան ամեն մի համարը։

—Պարոն պրիմիէր, կարթում ին... հատա վունց ասիմ, փող... չին տալի։

—Ի՞նչ, էտ ո՞նց կըլի—այլեւս չիմանամ էդ տեսակ բողոք, թէ չէ՞ շատ կը նեղանամ. մուքթան լաւ բան չէ։

—Պատկերդ վուր նխշինք, խօմ չիս նեղանայ մեր գուրծիչներու թաւուր։

—Չէ, չիմ նեղանայ։

ЛИТ.С.БЫХОВА

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 Թ.

VI Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր բնտանիքների համար

ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆները ուզի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція „ХАТАБАЛА".
Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ»
Բ Ա Ժ Ա Ն Ե Գ Ի Ն Ն Է

| | |
|---|---|
| Տարեկան . . . . . . . . . . | 5 ր. |
| Կէս տարին . . . . . . . . . | 3 » |
| Երեք ամիսը . . . . . . . . | 1 » 50 կ. |
| Ամիսը . . . . . . . . . . . | — 50 » |
| Թիֆլիսում տարեկան . . . . | 4 » — » |

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով։

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75 % զեղչ։

Ջրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ՆՈՅԵՄԲԵՐ 31 օր

8

Суббота ՇԱԲԱԹ შაბათი
Լուսնի 26

**9** (կիր.) Օր չարչարանաց խմբագրաց հայոց, որք բազում գրեցին վասն կաթողիկոսական ընտրութեանց. իսկ այսօր սևացան գի ոչ ոք նոցա լսեց։

**10** (բ. շ.) Յիշատակ պատմագրութեան գէէօյի, որ այսօր այսպէս գրէ. իսկ էքուց այնպէս փէշէ եղելութիւն, որ ինքն էլ զարմանայ թէ ինչ է արեալ։

**11** (գ. շ.) Հարսանիք—ամուրի կանայք կարին առնել զկոյս աղոց քորփոց՝ եթէ զայն գտանիցեն—վասն ամուսնութեանն։

**12** (դ. շ.) Պահք. բայց և ուտող կերակուր լաւ է ուտել եթէ զիշտայս ունէք։

**13** (ե. շ.) Տօն սրբոցն Ծիպլիծատուրից Քաչալից, Քորից, Կաղից և Քոսից, որք վասն ազգիս տանջւեցան, հալւեցան և ոչ երբէք խելքի վրայ եկան։

**14** (ուրբ.) Յիշատակ սրբոցն բազմագէտ վարդապետից Էջմիածնի, որք պէս-պէս զալթաբանդութիւն գիտեն. իսկ օրացոյցն ոչ կարեն կազմել. սակայն մեծ մեծ խօսին և յանդգնին նոյն իսկ կաթողիկոսական թեկնածու իրենց հռչակեն. ա՜յ հարամ լիցի զհացն ազգիս, որ նրանք ուտին և քնթեմէն դուրս գայ, ամէն։

Տոմարագէտ և օրացոյցապետ՝
Ազբօսիօս արք-վարդապետ.

## ԷՔՈՒՑ ԺԱՄ ԳՆԱՑԷՔ

—

Ա՜յ էդ էի ասում ա՜յ, էդ էի ասում է. դուք հէնց գիդաք թէ խօսքերս քամի է։

Վունչ տեսանէք զէգիպտուս։

Աբա մարթ հայ ըլի ու կաթողիկոսական խնթրով փիքր չանէ. կուլի՞։

Իմ հոքին գիդենայ. ես կու աստամ, վուր իմ համա դժոխքում տիղ կու գթնուի՝ համա էտունք չիմ աստայ։

Ա՜յ հիմի խօմ համ Էւրոպում ու Աֆրիկում վայնոբա է, համէլ Կիտայում բունտիր—սաւայ դրամէն՝ խօ թանգութինի վրէն էլ խիլիմ խօսկ կայ, ու Էւրոպումը մունոնաթնիր էն անում—էտ էլ վունչիչ, տեհնում էք էլի, վուր անվախտ ցրտիր էն անում ու փէշի տրուբէքը, բուխրէքը չի՞ք իստակիլ տւիլ, էդ բոլուրը տեհնում իք ու ինչ գուզէք ասէք, ու էլի չիք կանայ ասի՝ թէ էս բանը էսինց է ու էնինց, էն բանը՝ էնինց է ու էսինց — ձիգնից ո՞ւմ գուզէք հարցնէք, ո՞ւմը խօսցնէք Էջմիաձնի ծակ ու ծուկերի, միր կաթողիկոսական խարջ եպիսկուպուզների օխտը պորտի, արած չարածի, կերած խմածի վրէն հաւատա՝ հեստի իստորէք կու պատմիք, վուր աթմօրթին կու գիդենայ թէ աղօթք էք ասում կամ գամուցանէք (հանելուկներ) դուս բերում։

Աստուծ հոքին լուսաւորէ միր Իզմիրլով Մաթէուս կաթողիկոսի, հրեշտակներու փայ դառնայ նրա հոքին-նա վուր չմեռնէր՝ ինչ կուլէր միր հալը։

Աբա ես էտ իմ ասում է։

Ցոցիալութինի ժուգը մէ գլուխ էն էինք ասում-խօսում թէ ցօցիալ-դեմոկրատութին ուփրօ լաւ է թու ցօցիալ ռեօլացիութին, ցօցիալ-ֆեդելացիուլին թէ ցօցիալ անարխիստուլին, մաքսիմուստուլին թէ մինիմուստուրին։

Իժում իփ վուր դաշնացկութինը մէքից շիլափլաւ էլաւ, մէ գլուխ էն էինք գրում խօսում՝ թէ դաշնակցութինի էս բանը պրօգրամումն է գրած՝ ու էն բանը կի անպրօգրամ է. պլատֆորմի ու պօլուստանկի վրէն էնչափ խօսեցին, վուր չուրս հինգ տարի է Սարուխանովը չալիշ է գալիս Էւլախից—Շուշի մաշինա շինի ու չի կանում վունչ ստանցիա, վունչ պօլուստանցիա, վունչ վագզալ՝ ու պլատֆորմ խօմ չի կանում շինի ու չի կանում։

Բայղուշնիր էք է։

Էս էրկու տարին էլ խօ զահլա տարաք՝ կաթողկոս հա կաթողկոս։

—Կաթողկոսը էսինց պիտի ըլի ու էնից չպիտի ըլի։

ეროვნული ბიბლიოთეკა

—Կաթղկոսը էնինց պիտի ըլի ու էնինց չպիտի ըլի։

—Կաթղկոս. էս էպիսկուպուզը ուփրօ լաւ կուլի ու էն կի փիս է։

Փիսը ուփրօ լաւ դուս կու կաղնի քանց թու լաւը։

Արա մէ հաշիւ տւէք ձիզ ու ձիզ. էտինց չէ՞։

Համա վունչինչ։

Էտ էլ վուր չլէր էլ ինչ պտէր ըլի միր հալը։ Ակի ասում իմ, լուս դառնայ Իզմիրլովի հոքին, վուր նա միռաւ ու էլի կաթղկոսական խնթերքներ աղաք էկան։

Միր վրացի ախպէրնիրը, իլաքի Պարֆէն Գոտուէն, վուր կաթղկոսական խնթիրք չէ գթնում՝ մէ գլուխ տիրացուական խնթիրքներու վրէն է գրում —Դիդուբի ժամումը, կօսէ, տիրացուն ռուս է, կօսէ, խալխը կի վրացնակ է աղօթք անում, կօսէ։

Մա՜շ։

Մենակ դա՞. միզնում էլ էտինց չի՞, իփ վուր մինձ-մինձ բանիրը վերջացնում ինք, իժում պուճուր-պուճուր բաներումէն ինք խօսում։

Էլի Աստուծ հոքին լուսաւորի միր Իզմիրլովենց կաթղկոսի լուս հոքուն, վուր չմեռնէր հիմի մինք պտէր, վուր տիրացուական խնթիրքներու համա ժողովք անէինք։

Էլի լաւ թէ վատ՝ կաթղկոսականը ուփրօ լաւ է՝ քանց թու տիրացուականը։ Առանց էն էլ միր «Հօրիզօնը» տիրացուական է. «Հօրիզօն» ինչի ինք ասում մէկէնիրը կի պակաս ին։

Իս մէ ցօցիալ գիդիմ, վուր մղդսի է. ինքը իրին մարթ է հաշւում, կարմիր կարմիր է խօսում՝ համա օխչում պատարաքը գիդենայ—մեռել լւացնող է քէլէխ ուտող։

Էտ էլ վունչինչ։

Էքուց ինչ է։

Էքուց կիրակի կուլի, մաշ էրկուշաբթի խօմ չի ըլի, հա էն էի ասում, էքուց՝ էդ կիրակի օրը, աբ տեհէք թէ միր ինտիլիկինտներից ո՞վ ուփրօ տիրացու է, ո՞վ ուփրօ մղդսի, ով ուփրօ մեռել լւացնող, ո՞վ քէլէխ ուտող, ո՞վ Խօջիվանքի մեռիներու ղարաուլ։

Միր ժամերում էքուց ժողովքի վուր գնաք լաւ կօնիք. մէ քիչ էլ հոքու վրէն չալիշ էկէք հէր օխնածնիր—ձիր հոքին չէ՞—բան ուզովի խօմ չէ։

Էտ էլ չի, մի քիչ էլ մարմնի համա փիքր արէք. ձիր ուզած պատւիրակ վուր նընդրէք, նա էլ իրա գօրա՝ իր թաւուր պատկամաւոր կունընդրէ, էս պատկամաւորն էլ ձիր ուզած կաթղկոս, կաթղկոսն էլ ինչ դուք կօսիք՝ էն կօնի—ինչ թաւուր… բայց մեղայ Աստծու. կաթղկոս խօմ միզ համա չինք նընդրում, կաթղկոս ասկի համա ինք նընդրում։

Էքուց ժամ գնացէք. գուզէք մոմեր էլ միք վառէ, ու զանձանակի ժուզը կի էգեղեցու դուսը՝ հեռու կաղնեցէք, Աստուծ բարաքաթ տայ հաուց ասկի մեռելներուն, մէկէլ Վրթանէս Փափազովի գթած խուրջինին. ինչ էք քըթներդ կախի, պատւերակ նընդրեցէք էլի, ուրիշ բան խօմ չին ուզում ձեզմէն։

Ամէն։

*Խաթաբալա ամենայն հաուց*

**Պատպար տղա Կալաթուզով**

## EX ՇԱՀԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԻՐ ԵՂԲՕՐԸ

I

*Սիրելի Սալա՜ր, առնելով կալամ,*
*Դեռ տալիս եմ քեզ սախկալա-սալամ.*
*Գլուխդ մեռնի՛, ես քեզ մարդ ասի,*
*Ասի—ա՜յ զարդաշ օգնութեան հասի…*

*Սակայն լսում եմ—օ՜ սիրտս է ճաքում,*
*Ինքդ քեզի այդտեղ շատ ես հուչակում;*
*Եւ դեռ կրում ես զէնքը քո ուսին*
*Իգիթի նման… թո՜ւհ քո նամուսին։*

II

*Այ դալի Սալար, առնելով կալամ,*
*Էլ չեմ տալի քեզ սախկալա-սալամ.*
*Քո նենգութեան դէմ տեսար հօ այ ի՜թ*
*Ինչ փորձանք բերեց Ալլահը գլխիդ.*

*Երբ ես լսեցի—թէ դու ջարդ կերար,*
*Սիրտս հովացաւ այդ բանի համար.*
*Ես շատ էլ չլնեմ էլի լաւ կապրեմ,*
*Բայց դու իգիթ չես… զինդաբատ Եփրե՜մ…*

**Մարիկ**

## ՏԻԵԶԵՐՔԸ ԵՒ ԵՍ

—

*Մեծ. պ. խմբագիր,*

«Հօրիզոն»-ում նորերս տպագրւեցին պ. Լէօի երեք յօդւածները «Օրմանեանը և ես» վերնագրով։ Առաջինը 4 արշին, 9 և կէս վերշօկ երկարութեամբ, հաւասար էր Օրմանեանի և Լէօյի բոյին, եթէ մէկին միւսի գլխին կանգնացնէք, երկրորդը 4 արշ. 2 վերշօկ երկարութեամբ կարող էր ծառայել ինչպէս ուրար պ. Լէօին, եթէ նա լինէր սարկաւագ, իսկ երրորդը 5 արշ. 11 վերշ. երկարութեամբ, ճիշտ երեք անգամ կարող էր փաթաթւել հաստլիկ Օրմանեանի մէջքի շուրջը։ Յօդւածների ընդհանուր երկարութիւնը, որը կազմում է 4 սաժ. 2 արշ. 6 և կէս վերշօկ, ճիշտ հաւասար է տարածութիւնը «Հօրիզոնի» խմբագրատան շէմքից մինչև Համբ. Մելիքեանի բնակարանի շէմքը. համբերութեամբ անցնելով այդ գրւածքի ամբողջ տարածութիւնը առաջին տողից մինչև վերջինը, ես գտայ, որ այդպիսի յօդւածներ գրելու համար պահանջւում է միայն թուղթ, գրիչ և համբերութիւն։ Ուստի, այսօրւանից ձեռնարկելով մի շարք պատմական արժէք ունեցող յօդւածներ գրելուն, ինչպէս, օրինակ, «Դուրեանը և ես», «Գլադստօնը և ես», «Ես և Շէքսպիրը», «Ես և Մահմէդ Ալի շահը», «Մակար Զմշկեանը և ես», և այլն, որոշել եմ այդ յօդւածները տպագրել Ձեր յարգելի թերթում, ուստի և ուղարկում եմ Ձեզ, յարգելի խմբագիր, առաջին յօդւածիս առաջին գլխի առաջին մասը։

Խորին յարգանօք՝ **Ճանճ**

—

## ԴՈՒՐԵԱՆԸ ԵՒ ԵՍ

I

Ես Դուրեանի հետ անձամբ ծանօթ չեմ, ոչ էլ Դուրեանը ինձ հետ։ Ես նրա գրւածքները չեմ կարդացել, ոչ էլ նա իմը։ Բայց չեմ գիտի ինչու նա իմ դէմ ինտրիգներ է է սկսում։ Այդ պարզ երևաց այն մի նախադասութիւնից, որը նա մտադրութիւն է ունեցել ասել «Մշակ»-ի «աւագ-խմբագիր» Համբարձում Առաքելեանին։ Ասենք այս վերջինը յայտնի է իր ստերով և գրպարտութիւններով իմ դէմ դեռ այն ժամանակից, երբ մենք միասին աշխատակցում էինք «Մշակ»-ում։ Զօրս հարիւր տարի է անցել հայերէն լեզւով առաջին գիրքը լոյս տեսնելու օրից և հազար հինգհարիւր տարի է գոյութիւն ունի հայ գիրը, բայց ոչ մի ժամանակ թղթի կամ մագաղաթի վրայ չին գրել այնպիսի սուտը ստեր, ինչպէսին որ Համբարձում Առաքելեանը թոյլ է տալիս իրեն տպագրել նոր «Մշակ»-ի էջերում։ Գրիգոր Լուսաւորիչը, մտցնելով հայերիս մէջ քրիստոնէութիւնը մտադիր էր դրանով ազնւացնել հայ սրտերը, բայց, աւա՜ղ, 20-րդ դարում մենք ունեցանք Համբ. Առաքելեաններ։ Ինձ յայտնի է հաստատ

# ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԸ ԵՒ ՄԱՀՄԷԴ ԱԼԻՆ



—Մահմէդ, Մահմէդ—խելքի արի, տես թէ ես ինչ հանգիստ եմ է, ինչ կանես թագաւորութիւն, երբ հանգիստ չպիտի ունենաս. աւելի լաւ չէ՞ ինձ նման լինես։

—Ա՜խ Աբդուլ ձեր էր թէ ես էլ քեզ պէս բաղդ ունենայի, ու մի դղեակում էլ ես փակուած լինէի, հիմի խօ էսպէս խայտառակուած չէի լինի։







աղբիւրներից, որ եթէ Նոյը մի վայրկեան անգամ կարողանար ենթադրել, որ իր ապագայ սերունդից առաջ կըգայ Համբարձում Առաքելեանը, նա ինքը կըխորտակէր հեղեղի ջրերում իր տապանը։ Այժմ անցնենք մեր միւս նախահայրերին։

(Կըշարունակի)

Ճանճ

—

Զունչի երէկ մի չինովնիկ ինձ խօսք տուից, վուր եանվարի 200,000 վիկրիշը իմ բիլէթի վրայ գցել կու տայ ու էրկու թուման էլ ինձմէն մաղարիչ վիր կալաւ, մինք յայտնում ինք հաուց ասկին մանիֆէստ ու էս գրուածքի շարունակութէնից ազատում ինք։

Դասպար Կալաեուզով

## ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

—

Դասպար Աղա Ջան.

Էֆէի յուշացայ. չորս թարաֆէն ինձի թափալամիշ կենին թէ, ինչի չիս գալայիր։ Զիմանաս թէ թամբլութէն կենիմ, եա յանկշի յետև ցկիմ կը, չէ, զուրբան, ատպէս բաներ իմ գաֆտրիս մէջ գրած չկայ։ Աս արալղ յուրիշ չեշիտ սիլաթ գործեր շատ ունէի. ատոր համար խանութս կողպեր էի. համ էլ աս մեր Ղարսի խանթներից առածս գալայը իրենց ծախողների պէս գալը է. ասօրայ գալայածս յեգվան գենա ժանգոտ, գենա մրօտ։ Կըսին թէ Իտալիայի գալայը շատ խաս է, շատ ալ քեասքիւն։ Իտալացիք Տրիպոլիսը գալայեցին. արթղ սրով Համիդի քաղաքները գալայելով գլոխ գելնին։ Շատ ատպէս մէ քեասքիւն գալայմ առնելու համար էկայ Թիֆլիս։ Օրը կիրակի էր. գնացի ժամ։ Ալլահչուն ասինք, շատ թամուզ ու նիշուն զարդարած էր։ Պատարագը կայնիր էր. տիրացուները նոթալամիշ գալէին կը, հաստ ու բարակ կլկլացնէին կը։ Հարիֆին մէկն ալ զուզած զարդարած սարոկներով յելիր էր դասը, տէրտէրներուն յառաջը. կռնակը դէմ էր էրեր սեղանին, բաղի բաղի ոտը նարդվանին դնէր կը պալկի հետ խաղար կը. ձեռքները յետևը դնէր կը. բաղի ալ ոտի մէկը ծալէր կը. լակլակի պէս մէ ոտի վրայ կայնէր կը. ոչ խաչ հանել, ոչ ծունդը դնել, ոչ համբուրել... ատ հարիֆը ինչղ քրիստոնիայ էր. ես չհասկացայ. ինչ իրաւունքով բիթունէն յառաջ էր կայնիր. ատ ալ չհասկցայ։

Ժամը անքան ալ մարդ չկար. հոը դուռը լիքը մարդ էր. թոպուն-թոպուն կայնիր գեսվազութեն կէնէին կը։ Պատարագիչ տէրտէրը կըսէր. «առէք, կերէք». մէ բիջոմ ալ ժամի շէմին վրան կայնիր էր ու ժամից դուս էկողին դէմ կենէր գիրքմ ուճաար կը. «շան տկլոր, շան տկլոր, գինը 5 կ.»։ Ջանմ ատ ժամը հէչ գլխաւորմ չունի, օր ատ «շան-տկլոր» ծախողներին ժամի դռնից վռնդէ, օր պատարագին վախթը «շան տկլոր» չծախին։

Ատ ժամին գլխաւորը Եփրեմ սրբազանն է. ատ օրը ժամ չէր էկիր, տիրացուն ըսաւ սրբազանը տկար է. գենա սանջամիշ է էղիր։ Ցանտէր Մայ ատ սանջուն, օր սատանի պէս կիրակի օրը պատարագին վախթը սրբազանի փորից բռնէ կը։ Ա՛խ ինչ ասիմ օր, ինչ հասկնաք։ Զէշիտ չէշիտ հոգևորականներ փէյտայ էղան, յամին բան թեթևցրին, յամին բան ստեցին։ Իլլաքիմ Երևանդ վարդապետները. ատ տէր Մինասի մանչերը, ատ թազայ գեալդի գիտունները, ֆարմասօնութեն քարոզեցին, յեաև ալ տեսան օր իրենց քարոզներն ու գրած գրքերը բանի տեղ դնող չեղաւ. ինատ էրին, վերարկուն ու վեղարը մէ կնկամ հետ թրամփայ էրին։ Ատիկ հերիք չէ, հիմի ալ ատ Երևանդները չորս թաթանի ին դառիր, գիշեր զօր գրին մրին կը թէ, ճան բոռան կը թէ՝

—Կարապետ եպիսկոպոսը լաւ կաթղիկոս գալի կը։

Ատ բանդան բէշրէթար ավանանները գիտեն թէ Կարապետն օր կաթողիկոս դառաւ թէ չէ, արթղ ժամ ու պատարագը Երևանդի յուզածի պէս վերջացնէ կը. «Մոնարհեցոն, Ապրեցոն» գրքի միջից հանէ կը, ու յամին բան ֆարմասօնի դայտի սարգէ կը, ալ ոչ պսակ, ոչ պատարագ, ոչ մեռոն, ոչ կնունք, բիթուն, բիթուն վերջացնին կը։ Զէ զուրբան, շատ եաղլիշ իք. ատիկ գլոխ գալու բան չէ, խելքերուդ քշայ էրէք։

Տասը հազար օր Երևանդ յըլլի, 40 հազար ալ Կարապետ. պատէք, տրաքիք, կըտոր-կտոր յըլլիք, փառչայ փարայ գաք մեր ժամի մէ մաղին չիք կնայ դազմիշ յըլլի, մեր ժամ ու պատարագը չիք կնայ փոխի։ Քանի Ղալայչի Մարգարը սաղ է, Երևանդները չեն կնայ մեր ժամը քանդել։ Վերքան Արիստոսաներ, Մակեդոնիներ գրեցին-մրեցին քարոզեցին՝ վերջը իրանք խայտառակուան ու Սիբիր գնացին, իրենց մուրազը իրենց փորը մնաց։ Ջանըմ հազար չէշիտ ցաւ ու չոռ ունինք. հազար չէշիտ դարդ ու դասավաթ. թէ գիտուն իք, թէ գալամ ունիք, խելք ունիք ատ դարդերուն համար գրէք, դարման գտէք։

Քեռի Երևանդ ջան, ըսիր իմ, էլի կսիմ. խելքիդ քշայ էրայ, ինչ չէշիտ կաթղկոս գուզես ջոկիր, քո քարոզները թթու դիր, ու կաթլէթի հետ կեր։ Մեր ժամը հազարաւոր սրբերի յարունով է շինուած. վեվ իրաւունք ունի փոխելու. թազայ թազայ մօդնի բաներ սարգելու։ Քեռի ջան, մեր ժամ ու պատարագին չիս հաւնիր, ատոր համար ալ ինատ էրիր, մեզէն բաժնուար. դավաղանը տուիր՝ պալկայ առար, վերարկուն հանիր՝ սերդուկ հագար, հայր սուրբ էիր՝ քեռի դառար. վեղարը տուիր, կնիկ առար. դէ հիմի ըսէ տեսնիմ, ալ ինչ գործ ունիս մեր ժամ ու պատարագի հետ։ Բա՛ ինչ չեմ, մեր հոգևոր գործերուն ա՛ մի խառնուիր։ Քեզի էսներուն հետ ինչ գործ։ Դարէն ըսիր է.

«Մարդ ի պատի էր, ոչ իմացաւ։ հաւասարեցաւ...

Դալայչի Մարգար



## ԻՆՑԻԿԼՈՊԵԴԻԱ

(Տե՛ս Ա.—Ը. տարեր)

Թ.

Թիսկ.—Հարթ գործիք է, որով փունչիքը հացն են փուռն գցում, իսկ հոգաբարձուները ուսուցիչներին։

Թազուն.— Նշանակում է ծածուկ. մի բան, որից փախչում են գողերը։

Թոյն.—Հեղուկ է, որ հանգիստ կերպով քնացնում է անհանգիստ կեանք վարածներին։

Թաբախ.—Սա մի բոլորակ իր է, որ կինտոները գործ են ածում միրգ ծախելու համար, իսկ տիկինները՝ գլխարկի տեղ։

Թանկութիւն.—Մի գրութիւն, որ յաճախ արտայայտւում է Թիֆլիսում. բայց քաղաքային վարչութիւնը դրա առաջն առնում է ամսական 8 անգամ հացի և մսի սակագինը փոխելով։

Թօխլօ.—Կոչւում է թերխաշ ձուն. դրան ամենից շատ գործ են ածում տիրացուները չաղ մեռել թաղելիս և առաջին անգամ բեխ վերարած դերասանիկները՝ գեղարուեստի տաճարը մտնելիս։

Թելէթ.—Ուխտատեղի է։ Քաղաքային բժիշկները հիւանդներին հանքային ջրերն են ուղարկում բժշկուելու, իսկ Հալաբարտի գրքացները՝ Թելէթի ուխտատեղին։ Ասում են թէ Թելէթի վանահայրը տուլի համակարծիք է վերջինին։

Թոզ.—Դա բարակ փոշի է, որ փչում են և քամին և մարդիկ. բայց Աստուած հեռու տանի. վերջինիս փչած թոզը փոթորիկի ազդեցութիւն է թողնում։ Ինչպէս օրինակ Թիֆլիսի շերամապահական կայարանը ցու-

ցահանդէսում ծածուկ թող փչեց, բայց փոթորկի հետեւանք ունեցաւ։

Թեւ.—Մարմնի թռչելու մասն է, որ ընդունակ է թռցնելու։ Օրինակ օդի մէջ թռչում են թեւաւոր թռչունները, իսկ եկեղեցական մնդուկներից՝ անթեւ փողերը։ Բայց Աստուած հեռու պահի ամուսիններից թեւ առած թռչող կանանցից։ Այդպիսիների թռիչքները Ֆերբուրովի այէրօպլանից աւելի մեծ վնասներ են տալիս։

Թեքւել.—Կընշանակի ուղղահայեաց դիրքը փոխել։ Թեքւելը աւելի շատ պատահում է հայերիս մէջ։ Այս դէպքում թեքւելը առաջ է գալիս նրանից, նայած թէ մագնիսականութիւնը որ կողմից աւելի ուժեղ է ձգում։

Թանձր.—Ի՞նչպէս բացատրեմ, օր. եթէ խաշոմփիկները շատ են եփում, կերակուրը թանձրանում է, եթէ մարդիկ պօլիտիկուրի գործերի մասին շատ են մտածում, ուղեղները թանձրանում է։ Մի խօսքով թանձրութիւնը առաջ է գալիս չափից դուրս կատարած գործողութիւնից։

Էնցիկլօպեդիստ

**Փարեմուզ**



## ՍՐՏԻ ԸՆՏՐԱԾԸ

(Արեւելեան զրոյցներից)

Պարսից նշանաւոր բանաստեղծ և փիլիսոփա Հաֆիզն իր ճամբորդութեան ընթացքում մի առ ժամանակ հիւր մնաց մի հզօր խանի մօտ։ Այդ խանն ունէր մինուճար աղջիկ, որին աշխարհիս ամեն բանից աւելի էր սիրում։ Շիրազը, այսպէս էր նրա անունը—մի բարձրահասակ և տեսքով աղջիկ էր, բայց ոչ այնքան գեղեցիկ։

Շիրազը վաղուց յարգում և հիանում էր Հաֆիզով՝ լսած լինելով միայն նրա երգերը, իսկ երբ նրան իր առաջը տեսաւ՝ նրա վրայ խելակորոյս կերպով սիրահարւելով՝ նրան իր «սրտի ընտրածը» յայտարարեց։

Մի անգամ խանն ասաց Հաֆիզին.

--Աղջիկս վճռել է, որ միմիակ քեզ է ուզելու։ Դու իմաստուն մարդ ես և ես կարիք չեմ զգում բացատրելու, թէ ինչու Շիրազը չի կարող քո կինը դառնալ։

—Ո՛վ հզօր խան, ես արդէն նշանւած եմ բանաստեղծութեան վրայ, և ուրիշ նշանած ունենալ ես չեմ կարող։

Այնժամ երկուսը միասին ծրագիր կազմեցին, թէ ինչ ձևով աղջկայ տարօրինակ ցանկութեան առաջն առնեն։

Խանը գնաց աղջկայ մօտ և ասաց, թէ Հաֆիզը թողել—հեռացել է պալատից։

—Ինձ միայն մնում է վազել նրա ետեւից, հասնել նրան,—բացականչեց Շիրազը՝ դէպի դուռը վազելով։

Հայրը նրան բռնեց։

—Ուրեմն ես քեզ պիտի ճշմարտութիւնը յայտնեմ. Հաֆիզը մեռաւ։

Շիրազը բարձր աղաղակեց և հօր պատեանից սուրը հանեց։

—Եթէ Հաֆիզը մեռաւ, ես էլ պիտի մեռնեմ,—ասաց իշխանուհին՝ սրով իրան խոցել մտադրելով։

Խանը նրա ձեռքից սուրը խլեց։

—Հաֆիզը կենդանի է։ Ես միայն ուզեցի փորձել քո սէրը դէպի նա,—ասաց խանը։

Եւ գնալով Հաֆիզի մօտ, նա յայտնեց նրան, որ իրենց ծրագիրը չյաջողւեց։

Պահ մի մտածեց Հաֆիզն ու ասաց.

—Ես կըփորձեմ մի ուրիշ միջոց՝ նրան իր սիրուց սառեցնելու։ Տա՛ր ինձ աղջկադ ապարանքը և նրա հետ ինձ մենակ թող։

—Վստահանալով ազնիւ խօսքիդ՝ հաւատում եմ քեզ,—ասաց խանը և բանաստեղծին աղջկայ մօտ տանելով, ինքն ընդունարանի մեծ դահլիճում սպասեց։

Եւ յանկարծ կարճ ժամանակից յետոյ, Հաֆիզը դուրս վազեց այնտեղից, իսկ նրա ետեւից էլ երեւաց Շիրազը՝ այլայլւած և բարկացած։

Կատաղի, չարացած ձայնով բղաւեց իր պահապանների վրայ.

—Պալատից դո՛ւրս արէք այդ լիրբ ու անպիտանին, և նրան այլեւս չտեսնեմ այստեղ։

## ՖԵԼԻԵՏՕՆ

### ԿԱՐԳԱՑԷ՛Ք ԱԵՍ ՀԷՔԻԱԹԸ

I

Եղել է չի եղել մի խրճիթ Դամասկոսում. էս խրճիթի մէջ ապրելիս է եղել մի շաշ մարդ. էս շաշ մարդի գրպանը ծնւած օրից, բացի խիստ կեղտից կարծես օսլայւած մի թաշկինակից ու գզգզւած անցագրից աւելի ոչինչ չէր տեսած։ Ձեռքերը անշնորհք էին որեւէ գործ կատարելու և մարմինը՝ անընդունակ քրտնելու, փորը՝ դատարկ էր միշտ թմբուկի նման և ոտքերը՝ անդուլ շարժւող մեքենաներ Գօլովինսկ... (թո՜ւհ... մոռացայ որ անցքը կատարւում է Դամասկոսում)։

Ինչեւիցէ։

Հա՛, էս շաշ մարդի անունն էր՝ Կօկէ. մի կաղ-պառաւ մայր ունէր, անունը՝ Պօկէ (որովհետեւ վերջինս՝ որեւէ պէտքական բան ձախ աչքով նախատեսնելիս, եթէ տէրը բացակայ էր լինում աջ ձեռքով թռցնում էր, այդ պատճառով էլ ձախ աչքը աջից լայն էր և աջ ձեռքը ձախից երկար,) ունէր նաեւ երեսը պզուկներով լիքը մի քոյր անունը՝ Մօկէ, թէեւ «Սաթայէլի հարսնացու» մականունը աւելի էր սազում նրան։

Նրանք շատ խեղճ էին և միշտ խաշած բարձթօլ էին ուտում, թէեւ կարող էին խեղճ չլինել և խաշած վառեակներ էլ ուտել, եթէ որեւէ գործի ձեռնամուխ լինէին։ Օրինակ՝ Պօկէն կարող էր լաւ մեռել լողացնող լինել, Մօկէն՝ նկանակ ծախող, Կօկէն՝ լաւ կառապան կամ շուն բռնող—հացի խնդիր է։

Բայց ոչինչ չէին անում, որովհետեւ ծընւել էին ի բնէ ծոյլ ու մաղասոտ, ի բնէ շաշ, ի բնէ սովոր քաղաքավարի մուրացողութեան... շնորհիւ որոնց, նրանք էծի պոչի նման ոչ երկարում էին, ոչ էլ կարճանում. էհ, ինչեւիցէ էծի պոչը նրանց հետ։

II

Վերջ ի վերջոյ հէքիաթիս հերոսները, օգոստոսի ալւէսների պէս սովից այնքան նւաղեցին, որ ըստ տասնաքաշ նժարի—երեքը միասին հազիւ կշռում էին 12 գրւանքից մի քառորդ պակաս։

Ի՞նչ անել, ի՞նչ չանել.

Նախ Կօկէն վճռեց սև աքիմ հագնել, որովհետեւ II-րդ դասատան վկայական չունէր թողեց այդ միտքը. տիրացու էլ չէր կարող դառնալ, որովհետեւ «խումար» խաղալ չգիտէր... և յանկարծ յիշեց, որ ըստ վկայութեան իր գլխին ամենաառաջին անգամ սապնող սատմոր սատծը.—ինքը ծնւել է ոչ թէ լալով այլ երգելով և շատերը նրա ձայնի անմեղ կլրկլրանքի մէջ պարզ լսել են ինչ որ խուլ հնչիւններ—

Դօ, րէ, մի, ֆա, սօլ...

Առանց երկար ու բարակ մտածելու նա վճռեց թատրոն մտնել, և այդ մտքի հետ խնդագին համաձայնեցին իր կաղ մամիկն ու պզուկապալար քուրիկը։

Էլ ինչ ասել կուզէ նա անմիջապէս իր դունչ ու կզակի անտառները, ուր վաղուց ի հետէ բնակութիւն էին հաստատել մանրիկ պարազիտները, ենթարկեց սուր ածելիի աւերածութեանը, շապօյի եզրը թեքեց դէպի վեր ու պատրաստեց ընկնել գաւառները համերգներ ու ներկայացումներ տալու։

Եւ ահա մի գեղեցիկ օր, հրաժեշտ տալով իր հարազատներին, որոնք հազիւ էին դադրել նրա տկլոր դնչին նայելով—ծիծաղելուց, վերցրեց քիչ հաց ու պանիր և ճանապարհ ընկաւ առաջ։

III

Էս շաշ մարդը տեսնելով որ աժէնուրեք գիւղական վարժապետներն ու վարժուհիները սիրալիր ընդունելութիւն ու աջակցութիւն են ցոյց տալիս, ինքն իրան մտմտաց.

—Չէ, շահաւէտ գործ է, հարկաւոր է աւելի պինդ կպչել... և առաջ դիմելով, էլի շատ նորանոր տեղեր առատ հունձ արաւ և մի կապոց թղթադրամներով տուն վերադարձաւ, ուր—«Ապառաժ» թերթում հետեւեալ տողերը կարդաց գաւառից.

—«Հայւանից վատթար մի ինքնակոչ արտիստ, շրջելով մեր կողմերը աքաղաղ և երբեմն ցորենով ու գարիով համերգներ է տալիս...»

ეროვნული ბიბლიოთეკა

Խանը, ուրախացած, յիշեց Հաֆիզին։

—Ասա տեսնեմ, ինչպէս կարողացար այդչափ փայլուն կերպով գործը գլուխ բերել,—հարցրեց նա խիստ հետաքրքրուած։

—Ես ասացի քո պայծառագեղ աղջկան, որ նա մի աչքով շղիկ է և, ընդհանրապէս, այնքան էլ գեղեցիկ չէ,—պատասխանեց Հաֆիզը։

Թարգմ. Դ. Բաբուրեան

## Ա—ԻՆ

**ԱՆԿԵՂԾ ՍՐՏԻՑ.**

(Նմանութիւն)

Երանի լինեմ վտակ կարկաչուն,
Որ դէմքդ ցօղեմ ալեաց շիթերով,
Անտառի միջով հոսեմ դէպ հեստ՝ուն
Եւ քեզ զրաւեմ զեղգեղուն ծայնով։

Երանի լինեմ սիրահար սոխակ,
Իսկ դու նոր ծաղկած մի թուփ վարդինու,
Որ յոգնած ժամին քո ստուերի տակ
Նստեմ սիրատանջ՝ վի՛շտս երգելո՛ւ...

Երանի լինեմ լեռների արծիւ,
Որ թռչեմ ազատ դէպ վսեմն անհուն.
Իսկ դու մի հրեշտակ իջնես երկնքից
Եւ բա՛ռնր անհունում համբուրենք սիրո՛ւն։

Ես լռիկ-մնջիկ համբոյրս ճակտիդ
Դրո՛շմեմ քնքշօրէն լացող յոյզերով,
Իսկ դու զրկես պինդ քեզեզ—թեւերիդ
Նուրբ ծալքերի մէջ սիրակէզ սրտով...

Նարգիզ

## ԺՈՂՈՎՐԴԻԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Զորեքշաբթի հոկտեմբերի 5-ին Հայոց Դրամատիքական ընկ. թատերասէրների խումբը մասնակցութեամբ դերասանների ներկայացրեց «Վանիւշինի զաւակները» դրաման 4 գործ. հեղ. Ս. Նայդենովի։

Ինչպէս երևում է անցեալ ներկայացումը խրատացրել էր հասարակութեանը, որովհետև այս անգամ, սովորականի հակառակ՝ դահլիճը կիսով չափ դատարկ էր։

Ծեր Վանիւշինի դերը կատարում էր պ. Թաշճեանը, որ տարաւ շատ յաջող կերպով, թէև տեղ-տեղ, մանաւանդ բարկանալիս, մոռանալով իր ծերութիւնը, դիմում էր երիտասարդութեան օգնութեանը։

Վատ չէր նաև տ. Սոֆիկը Վանիւշինի կնոջ դերում. նա պարզ կերպով ներկայացրեց միամիտ և բարի Արինայի պատկերը։

Կլադիայի դերը կատարում էր Մարի գարիտը, որի անճոռնի դէմքը հարստին սազում էր գլխին յարմարեցրած շէկ ոչխարի գցած բուրդը։ Տեղ-տեղ սա էլ իր կաղութիւնն էր մոռանում և այնպէս եօրղա վազ տալիս, որ կարծես թէ 14 շային ձեռին Ալշվանգի խանութը լինէր գընալիս կորսետ առնելու։ Դրա ոտի կարճութիւնը նկատելի էր լինում աւելի այն ժամանակ, երբ ծխախոտը բերանին և ծունկը ծնկան վրայ դրած նստած էր լինում ու թեթև կերպով երևացնում անդէրվարտիկի սպիտակ հաշիները։

Լօթի Կրասաւինի դերը կատարում էր պ. Տէր-Յովհաննիսեանը։ Տնածակը կարծես իր կեանքում հարբած չլինի եղած։ Այդ դերը կատարելու համար հարկաւոր է մի քանի անգամ Շիրաշխանա վեր ու վար անել և ապա բեմ դուրս գալ։ Ինչ տեղ են հարկաւոր գալիս անիծեալ բօսիկամանդները։

Պ. Ամօ-Խարազեանը—Կոստանդինի և տ. Դուրեան-Արմէնեանը Ինայի դերերում լաւ էին, միայն թէ տիկնոջ՝ երկու տարբեր դերերում երևան գալը, թուլացնում էր խաղի էֆէկտը։

Պ. Գալստեանը միտք ունէր բաւարար տանել գիմնազիստ Ալէքսէյի դերը, բայց նրա աչքերի չորս կողմը քսած սև վաքսը խանգարում էր այդ։

---

Եւ ինչ էք կարծում Կոկէն ոչ միայն վերդովեց այլ և ուրախացաւ. Մօկէն որ մատների ծայրերով ըստ սովորութեան պոկում էր դէմքի պզուկները և շըրջագզեստին քսում, կանգ առնելով հայեան և ինքնակոչ բառերի վրայ, փորձեց համոզել թէ...

Բայց խօսքը կտրեց ասելով—ոչինչ, ոչինչ, ամէն ինչ փոքրից է սկսւում. այսօր ինձ կասէն—հայեան—ինքնակոչ, վաղը՝ կոչւած—շնորհալի, երրորդ օրը՝ տաղանդ, ապա հանճար և վերջապէս կրթնդայ իմ արտիստական փառքը. դեռ չեմ խօսում յօբելեանի մասին... բայց այնուամենայնիւ լրագրական ձեականութիւնը պահանջում է—պատասխանել.

—Ա՜խ մամիկ, եթէ տպէն, այն ժամանակ արդէն ես ոտից մինչ գլուխ արտիստ կըլինեմ, այն ժամանակ մենք մի անգամ ընդմիշտ հրաժեշտ կըտանք խաշած քարթօլին ու էլ սօլիտերը երբէք չի գալարիլ մեր աղիքներում...

Մի քաղցր յուզումով նստեց գրելու, թէև շատ ուտելուց այնքան էր ծուլացել ու թուլացել, որ վարանում էր նոյն իսկ քթին ստեպ-ստեպ նստող յամառ ճանճը քշելու. այո. նրա գրպանում այժմ զնգում էին փայլուն Աստուծոյ մասունքները և չտեսութիւնից այնքան բաներ էր առել ու կերել, որ բուկը կապել էր ու հազիւ էր շունչը փսսացնում...

Ահա վերջապէս գրչի թանաքոտ ու լօլոզ կտուցը մօտեցնելով կոյս թղթին (որի մի ծայրին կնքւած էր մի թոքախտաւոր առիւծ երկու ոտքերի վրայ ծառս եղած, որպէս գերմանական զինանշանի ըստ երևոյթին կրտւած ու ամորձիքները հանւած իր ցեղակիցը) նա մի քանի անգամ թղթի վրայ աջ ու ձախ երերեց դաստակը և գրեց։

Գրեց—որ ինքը շատ լաւ տղայ է, որ ծնեալուն պէս երգելիս է եղել դո, ըէ, մի, ֆա, սօլ... որ թղթակիցը սուտ է ասել... և այլն և այլն. ստորագրեց—«արտիստ՝ Կոկէ», կնքեց ու տարաւ ծածուկ «Ապտակ»-ի խմբագրատան դռան նամակարկղը ձգեց ու փախաւ։

Երեկոյեան գնաց օպէրայի, այդպէս էր ասում նա օպերային, ուր վերջին խաղամիջոցին բուֆետում նստած մտորելու ժամանակ, առաջը դրած գարեջրի փրփուրի մէջ, նշմարեց ճանճի չափ փոքրացած «Ապտակ»-ի մռայլ խմբագրին. որն ասում էր իբրև.

—Դու շաշ ես, չենք տպիլ.

Եւ երբ նա ուժգին ցնցուեց, մօտակայ մատակարարը հարցրեց.

—Հը՞ էծերն էին...

—Ո՛չ, խմբագիրն էր—շփոթւած վրայ բերեց Կոկէն ու անցաւ դահլիճ։

IV

Մի սատանայական մութ գիշեր էր։

Առաւելապէս մութ էր այն խրճիթը, ուր նաւթ չլինելու պատճառով ճրագը չէր վառւում և ուր մի հրեշաւոր համախառնութիւն էր ներդաշնակել մեր ծանօթ երրորդութիւնը, որպէս Поппури. Դուրսը՝ աշնանային սեւամած երկնից տարափում էր յորդ-շառաչուն անձրևը։ Ատամները թափւած մի ծերուկ շուն իր ամուսնու հետ եկել էր, գլուխը ներս հանել ապակիները կոտրատւած պատուհանի մի շրջանակից ու փառ-փառ ծիծաղելով—վազտում էր «Տպւած է, տըպւած, Կոկէ, դու մեծ մարդ ես...» նրա առաջ մի կոյտ լրագիրներ ոտքեր ու թեւեր առած ծափ էին տալիս, պարում ու խըշխշում—«Տպւած է, Կոկէ, դու մեծ մարդ ես...» Կոկէն լեղապատառ վեր ցատկեց տեղից և բանալով աչքերը, անմիջապէս վերցրեց Մանդակունու «Հեշտահեռային ոսկի—բարեկամը» ու կարդաց—«երազը բարի է և օրն կատարի»։

Իրօք—այդ օրը նա «Ապտակ»-ի վերջին համարում, խենթ հիացքով տպւած գտաւ իր հերքումը և այդ օրւանից ի նախատինս Մելպոմենէյի Թալիէյի նուիրեց իրան հայոց թատրոնին...

Աստուծուց երեք խնդ... չէ՞ ներեցէք, խաշած քարթօլ իջաւ—մէկը՝ Կոկէյին, միւսը՝ Մօկէյին, երրորդն էլ՝ Պոկէյին։

Մարիկ

ეროვნული ბიბლიოთეკა

Գ. Հայկազեանը անյաջող չէր Շչեօտկինի դերում, եթէ ի նկատի չառնենք նրա սւագած քիթը և շուտ շուտ վայր իջնող ակնոցները.

Անտրակտներին բաւականին քննադատներ էին երևան գալիս, ոմանք քննադատում էին դերասանների խաղը, ոմանք էլ առաջները անց ու դարձ անող օրիորդների չէկ ու սև մազերը:

Դերասանութիւնն էլ լաւ բան է եղել. իրանք բեմի վրայ ուտում, կշտանում են, իսկ հանդիսականների փորները վեց-վեց անել տալիս և արժանանում իւրաքանչիւր դերասան իր թաղի մարդկանց բուռն ծափահարութիւններին: Սաչխարէթից եկած բիժա Դանէլի հօրն ողորմի, առանց ծափահարութեան պակաս էր Տկվիլուլի բաղնիսում Օտէլլօ ու Համլէտ ներկայացնում, տօ:

Փարեմուզ

**Մինաս.**—Ի՞նչ է պակասում ժամանակակից կնոջ գլխարկին...

**Գրիգոր.**—Ծաղիկներ:

**Մինաս.**—Ոչ դու սխալւում ես. Թիֆլիսի բուսաբանական այգում չկան այնքան ծաղիկներ որքան կնոջ գլխարկի վրայ:

**Գրիգոր.**—Գուցէ ժապաւէններ...

**Մինաս.**—Ո՛չ, ո՛չ, չարաչար սխալւում ես ամբողջ Վարշաւայում չկան այնքան ժապաւէններ, որքան կնոջ գլխարկի վերայ:

**Գրիգոր.**—Ապա ի՞նչ է պակասում:

—Ես եմ պակասում...

—

**Մինաս.**—Ինչ տարբերութիւն կայ քաղաքագլխի և սարդինկայի մէջ:

**Գրիգոր.**—Ա՛յ քեզ յիմար, ինչպէս թէ ինչ տարբերութիւն կայ. քաղաքագլուխը մարդ է, իսկ սարդինկան, ձուկ:

**Մինաս.**—Լսիր և ես կապացուցեմ թէ ով է յիմարը, ես թէ դուն.—սարդինրան ճիշտ է ձուկ է, բայց անչուն չ դրութեամբ թիթեղեայ ամանի մէջ առանց գլխի կանոնաւոր ճնում է, իսկ քաղաքագլուխը չնայած գլուխ ունի, բայց նրա գլխում անկանոնութիւն է տիրում:

«Քանլլա-գեօզ»

## ՑԽՈՒՐ ԸՆԿՈՐԴՆԵՐ

Աստղե՛րը, էն վառվռուն աստղերը
Խորհրդօրէն ու տխուր ի՞նչ են փսփսում,
Ո՞ւմ դարդն են լալիս երկնքի աչքերը,
Ո՞ւմ մահն են ողբում անվերջ, անդադրում...

Քամինե՛րը, էն ազատ քամիները,
Խենթ ու լալահառաչ ի՞նչու են փոթորկում.
Ինձ պէս հալածւ՞ում են այդ ըմբոստ ոգիները.
Որ հանգիստ չունեն այս սև աշխարհում.

աուա՛կը, էն աուակը քաղցրաձայնչին

Ինչո՞ւ է մորմոքում, ի՞նչու է լալիս օրնիբուն:
Ա՛խ, նա է՞լ գիտէ, որ այս ցաւ աշխարհում
Ամեն ինչ մեռնո՛ւմ է, մոռացւում...:

Գ. Դարդունի

## ՍԱՔՕՅԻ ՄԱՀԸ

—

Սաքօն տարաւ հեքիմի մօտ իր հիւանդ քրոջը, խորհուրդ հարցնելու. պատմեց քրոջ ցաւը ու խնդրեց օգնել:

—Էս գիշեր, ասաց հեքիմը, կըգնաս Խոջիվանք, մի շամփուր կըխրես նահատակի գերեզմանը և քոյրդ կըլաւանայ:

Ճիշտ կէս գիշերին արիասիրտ Սաքօն շամփուրը ձեռքին, զգոյշ ներս է մտում Խոջիվանքի դռնով: Նայում է աջ ու ձախ, յանկարծ աչքերն ընկնում են ցանկապատի ցցերի վրայի կճուճներին, սարսափից երեսը շրջում է ու փախչում:

—Ախար, որ քոյրս միայն դրանով կըլաւանայ, մտածեց Սաքօն ճանապարհի կիսին ու վերադարձաւ:

Կրկին զգոյշ, մատների ծայրերի վրայ, դողալով առաջ գնաց: Ահ ու դողից սառը քրտինքը պատում է ճակատն ու գլորւելով կաթում է քթի ծայրից, ինչպէս կաթում է հեղեղից յետոյ կտուրների վրայից, աչքերը չուել՝ մեծացել են գկեռի չափ, մազերը բիզ բիզ ցցւել են աշնանը չոլում մնացած չոփերի նման: Շուրջը տիրում է այնպիսի լռութիւն, որ նա պարզ լսում է իր սրտի զարկը: Թէև Սաքօն մի քանի անգամ արդէն յետ էր դարձել նկատելով մեռելներին և ուզում էր փախչել, բայց քրոջ սէրը նրան առաջ էր մղում: Նա անցաւ առաջին գերեզմանը, յետոյ երկրորդը, երրորդը և յանկարծ կանգնեց: Թւում է նրան, որ մի գերեզմանի վրայ լոյս է իջել և նրա շուրջը սև ու սպիտակ կմախքներ, ձեռք-ձեռքի տւած, պար են բռնել, Սաքօն և դողում է և սքանչանում տեսարանով: Նա երկիւղածութեամբ խաչակնքում է երեսը.

—Մեռնեմ քեզ, Աստւած, ինչ որ չէի տեսել, տեսայ:

Հէնց որ նա յիշեց Աստծու անունը, բոլոր կմախքները կարծես մոգական զօրութեամբ չքացան: Այդ Սաքօյին արիութիւն տւեց և նա փոքր ինչ սրտապնդւած առաջ գնաց: Թէև երբեմն նրա մօտով անցնում էին մեռելներ, բայց Սաքօն Աստծու անունով հալածում էր նրանց որպէս չար դևերի:

Վերջապէս ահա և նահատակի գերեզմանը: Նա բռնեց շամփուրը սուր ծայրը նրքև դարձրած և խրեց գերեզմանի մէջ: Յանկարծ նրան մէկը կանչեց գերեզմանի միջից:

—Սա՛քօ, անպիտա՛ն, կողքս ծակեցիր:

—Տօ՛, անիծւա՛ծ, էդ ինչ արիր, լսեց յանկարծ առաջից:

—Սա՛քօ, ձայն տւին յետևից:

—Սա՛քօ, տուն քանդւած Սաքօ, լսեց աջ կողմից.

—Սա՛քօօօ, կրկնեցին նաև գերեզմանները...
կից:

Սաքօն ահից ուշքը կորցնելու վրայ է, նայում է աջ ու ձախ, ուզում է փախչել, բայց ոտքերը չեն հնազանդւում: Ամեն կողմից նրան մօտենում են խաւարի միջից մեռելների զզւելի դէմքերը և ամեն վայրկեան աւելի ու աւելի նեղացնում նրա շուրջը կազմած օղակը: Իսկ ձայները քանի գնում սաստկանում են: Կմախքները զըզւելի թուխչքի արագութեամբ դուրս են վազում գերեզմանների միջից և «Սաքօ» կանչելով վազում են դէպի նա:

—Սա՛քօ, Սա՛քօ, լսւում է նրա շուրջը և երբեմն այնքան են մօտենում նրան, որ նա զգում է նրանց շունչը իր դէմքի վրայ և չէ իմանում, թէ քիթը ո՞ր կողմը դարձնի գերեզմանային զզւելի գարշահոտութիւնից ազատւելու համար:

—Սա՛քօօօ, լսեց մի ձայն նրա ականջի տակին՝ կայծակի որոտի սաստկութեամբ:

Ձայնի սաստկութիւնից Սաքօյի աչքերը դարձան բոցավառ պնակներ, մազերը աւելի ևս ցցւեցին և կանգնեցին կարգապահ զինւորների պէս, դէմքը սիրահարւածի դէմքի պէս գունատւել է: Նա յուսահատ ճիգ է թափում կաշկանդող վախից ազատւելու և փախչելու, բայց ո՞վ զարհուրանք, գերեզմանի միջից բռնել են նրա արխալուխի փէշերը և չեն թողնում: Խեղճ Սաքօյի աչքերը մթնեցին, ականջում լսեցին թաղման զանգի ձայներ և նա իր ամբողջ ծանրութեամբ անշունչ ընկաւ գերեզմանի վրայ:

Մեռելները մինչև առաւօտ պարեցին նրա դիակի շուրջը և լրբաբար շարունակեցին մինչև գերեզմանատան պահապանի երևալը: Սա տեսնելով իր հպատակների անօրէն վարմունքը, լուրջ դէմք առաւ, աչք ու յօնքը կիտեց կարկտաբեր ամպի պէս և ձեռնափայտը թափ տալով, ազդակեց հրամայողաբար.

—Տեղներդ այս րոպէիս, լրբե՛ր, թէ չէ փորներդ վեր կածեմ:

Իրենց վերահսկիչին տեսնելով, մի քանի վախկոտներ դեռ առաջուց փախել էին, իսկ այժմ նրա սպառնալի ձայնը լսելով՝ նոյն իսկ ամենաքաջերը փախան: Պահապանը շրջում է իր դառող գլուխը բարձր բռնած, ինչպէս աֆրիկական առիւծն անապատում: Մօտենում է Սաքօյին և ի՞նչ է տեսնում: Նա մեռած ընկած է գերեզմանի վրայ, իսկ արխալուղի փէշերը շամփուրով ամուր մեխւած են գերեզմանին:

Կուրանի Ալիմ

*Ռաանողները, որոնք ավառները վերադառնալով հայրենիք՝ օգուտ են տալի հասարակութեան՝ կոյտուրական շաւղով առաջ տանելով նրան։*

## «ՀՈՐԻԶՈՆԸ» Ի՞ՆՉ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Է ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

—

*Պետրոս Սիմէօնեանցի ուրուականը.*— «Մշակի» ճետերի կուսակցութեան։

—

«Голосъ Кавказа» *լրագրի կարծիքով.*— «Միքայէլ Հրեշտակապետի» կուսակցութեան։

—

*Լեւ Տոլստոյի ուրուականը.* — «Կենդանի դիակների» կուսակցութեանը։

—

*Գամառ-Քաթիպայի ուրուականը.*—

Տեղը եկաւ հայ է նա,
Տեղը եկաւ այլազգի.
Իրօք ոչ այս է, ոչ այն,
Այլ ծնունդ մի նոր ազգի։

—

*Վասիլի Վէլեչկոյի ուրուականը.*—«Նոր-քաղաքի» բնակիչների կուսակցութեանը։

—

*Մաքսիմ Գորկին.*—«Оризонъ» — «На днѣ»։

—

*Մրգամաճառ մեշադին.* — «Հորիզոնը» պատկանում է «գեալ մանի թութ» կուսակցութեանը։

—

*Աստուածաշունչի Իսահակ հայրապետը.*— Մարմինը Եսաւինն է, ձայնը Յակովբինը։

—

*Օրթաճալի կինտոները.* — Սիւրտիւկով ժամահաց ուտողների կուսակցութեանը։

—

*Գրիգոր Արծրունու ուրուականը.*—Անառակ որդիների կուսակցութեանը։

—

*Տիլի-Պուճուրը.*—«Որտեղ հաց՝ այնտեղ գաց»-ի կուսակցութեանը։

—

*Եփրեմ խանը.*—Վախկոտ Արշակ-խան Գորոյեանցի կուսակցութեանը։

—

*Եփրեմ եպիսկոպոսը.*—Նապոլէօնի կոդէկսը խմբագրող օրէնսգէտների կուսակցութեանը։

—

*Իզնստիոս Հոյոլլան.*—«Հորիզոնի» խմբագիրները և համախոհները իմ աշակերտներս են։

—

*Սերվանտէսի ուրուականը.*—Գրչի Դոնքիշոտների և մամուլի Սանխո-Պանչոների կուսակցութեանը։

—

*Մոլլա-Նասրէդինի ուրուականը.*—Քեարվան կտրելու ընդունակութիւնից զուրկ, միայն լուսնեակով զմայլուողների կուսակցութեանը։

—

*Մ. Մենշիկովը.*—«Տգիտութիւնից առաջացած յամառութեան» ախտից ազատ եղող կուսակցութեանը։

—

*Մանկունի սրբազանը.*—Ինձ միշտ խաբող հուչակաւոր կարծուած անձանց կուսակցութեանը։

—

*Մեսրոպ եպիսկոպոսը.*—Արտասուքը ինձ խեղդում է շատ յուզած եմ, այժմ չեմ կարող ասել, պէտք է խորհրդակցեմ Սամսոն Յարութիւնեանի հետ։

**Մինաս.**—Ի՞նչ տարբերութիւն կայ փտարբանի և անիւի մէջ։

**Գրիգոր.**—Եղբայր քո խելքը Դէշտէ Սարիսաղ է անցել։ օրւայ քամին պոկել տարել է. ինչ տարբերութիւն պիտի լինի՝—փտատաքանը մարդ է՝ որ է հագնում, ման է գալիս, թէյ է խմում, հայ է ուտում, թուղթ է խաղում, ընչում է, խօսում է, արդարութիւնն է պաշպանում... իսկ անիւը փայտից շինուած մի առարկայ է։

**Մինաս.**—Տեսնում ես, որ քո խելքն է քամին տարել, ոչ իմը։ անիւին երբ իւղ ես քսում «լսում է» իսկ փտատաքանին երբ իւղ ես քսում „բղաւում է"։

—

**Մինաս.**—Քո կարծիքով որն է լաւ՝ ունենալ տղայ թէ աղջիկ։

**Գրիգոր.**—Պարզ է, աղջիկ։

**Մինաս.**—Պատճառը...

**Գրիգոր.**—Որովհետև տղային պահում պտպտանում, փող ես մխում կրթում և երբ գալիս է ժամանակը չարչարմունքիդ արդիւնքը կրկնապատիկը ստանալու, գլխին են գալիս ու զինւոր տանում...

**Մինաս.**—Շատ լաւ, բայց չէ որ տղայի գլխին են գալիս ու զինւոր տանում, իսկ աղջիկը երբ 16 տարեկան է դառնում ինքն է զինւորի ման գալիս...

«Քաէլլա-գիսղ»

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

**Մ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ.**

վերսկսել է հիւանդներին ընդունելը. ատամների և բերանի խոռոչի վերաբ.։ Տեխնիկ. աշխատանքների համար հրաւիրուած է արտասահմանից ատամ. սրբոյժ-տեխնիկ։ Ընդունելութիւնը՝ առ. ժամը 10—2, երեկ. ժամը 4—6, կիրակի օրերը ժամը 10—12-ը։

Միխայլովսկի պր. № 23

100—5.



# ОТКРЫТА ПОДПИСКА

НА СОБРАНІЕ

## НЕИЗДАННЫХЪ ХУДОЖЕСТВЕННЫХЪ ПРОИЗВЕДЕНІЙ Л. Н. ТОЛСТОГО

ИЗДАНІЕ АЛЕКСАНДРЫ ЛЬВОВНЫ ТОЛСТОЙ.

Слѣдуя указаніямъ, даннымъ ЛЬВОМЪ НИКОЛАЕВИЧЕМЪ ТОЛСТЫМЪ, дочь его Александра Львовна предприняла изданіе оставшихся послѣ него, еще не бывшихъ въ печати, его художественныхъ произведеній. Чистый доходъ съ этого изданія будетъ употребленъ издательницей согласно волѣ ЛЬВА НИКОЛАЕВИЧА.

Въ это изданіе войдутъ слѣдующія повѣсти, драмы и неоконченныя произведенія:

Хаджи-Муратъ.—Отецъ Сергій.—Дьяволъ.—Фальшивый купонъ.—Послѣ бала.—Что я видѣлъ во снѣ.—Алеша горшокъ.—Живой трупъ.—Ходынка.—Отъ ней всѣ качества.—Записки сумасшедшаго.—Нѣтъ въ мірѣ виноватыхъ.—Кто убійцы.—Записки Ѳедора Кузьмича.—Вступленіе къ исторіи матери,—Дѣтская мудрость.—Отецъ Василій и нѣкоторыя другія произведенія.

Изданіе это выйдетъ въ свѣтъ по подпискѣ, въ ограниченномъ количествѣ экземпл., и будетъ состоять изъ трехъ изящныхъ томовъ большого формата, на лучшей бумагѣ, съ портретами и автографами Л: Н. Толстого.

Цѣна за три тома 6 руб. съ пересылкой 6 руб. 50 коп.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА: при подпискѣ 3 руб. и при полученіи I тома —остальные 3 руб.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: Москва, Кузнецкій Мостъ, домъ кн. Гагарина, кв. 5, контора изданій А. Л. Толстой, и всѣхъ во главныхъ книжн. магазинахъ. 9—4

МАГАЗИНЪ
КОМПОЗИЦІЯ
Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8

громадная экономія
шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ
По фабричнымъ цѣнамъ
Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, как-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.
ИНѢЕТТЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ
*Остерегайтесъ поддѣлокъ и подражаній*
Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8
15—6 (о. ф.) М. А. КАЛТАКЯНЪ

ПАПИРОСЫ ЭКСТРА 15 шт. 6 коп. ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ ГОЛУБКА 10 шт. 3 коп. ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА ПАПИРОСЫ „ИНТЕЛЛИГЕНТНЫЯ" ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ԲԺԻՇԿ
ՓԱՆՕ ՄԱՆԴԷՆԵԱՆ
*Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։*
*Ընդունում է հիւանդներ իր ծսեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.*
0—2

ՐԷՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ
# „ԴԻԼԻ ՊՈՒԶՈՒՐ"
*Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ*

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ
*— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —*
*Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ*
25—24

# Первохл. ресторанъ „АНОННА"



*„Зданіе Артистическаго Общества"*
Сод. Я. Т. Бондаренко
Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ,** ег О обѣггэпѣвицъ—г-жи Сакко и Марія Оландезе и баритона Дж участіемъ ндезе, подъ управленіемъ САККО.
ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ
„АННОНѢ"
52—24

*Լույս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է*
ՆԱՐԴՈՍ
# ՊԱՅՔԱՐ
ՎԷՊ
Դիմաց է 75 կոպէկ
*Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները։*
10—3

Гипографія «Культура» Баронская 14. Խմբ.-հրատարակիչ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՔԱ[illegible]Զ